


3874

152-ԱԿ



Է. ՏԱՐԻ — ԹԻԻ 1-2 156 ՆՈՐ ՇՐՋԱՆ — 1936 ՅՈՒՆՈՒԱՐ — ՄԱՐՏ

Գ Է Մ Ք Ե Ր

Յ Ո Վ Ս Է Փ Ս Վ Ա Ճ Ե Ա Ն



« Գիտուն » անուանուելու իրապէս արժանի Հայերու սակաւաթիւ հոյլին մէջ Յովսէփ Սփանեան ուշադրու տեղ մը կը գրաւէ այսօր, ու սահմանուած է միջազգային գիտական աշխարհին մէջ առաջնակարգ դէմք մը դասնալու:

Ան ծնած է Պոլիս: Աւարտելէ յետոյ ընթացքը Մաշիկի Պէրկան վարժարանին, ուր ի միջի աշխարհ իրր ուսուցիչ ունեցած է Տիրան Զրաքեանը, հետեւած է Պոլսոյ Գեղարքածական Վարժարանի դասերուն, և 1918ին ստացած է գեղարքածի վկայական: Իր ուսանողութեան այդ շրջանին, Պէրկան վարժարանին մէջ ստանձնած է գեղարքածութեան դասեր: 1920ին, Ուսումնական Խորհուրդէն ստա-

ցած է, յետ քննութեան, գեղարքածութեան մասնակցու ուսուցչի վկայական:

1921ին, Սփանեան լքած է ուսուցչական ասպարէզը և եկած է Փարիզ, ուր արձանագրուած է Սորպոնի Գիտութեանց Ծափելիքին և հետեւելով քիմիարանութեան և բնական պատմութեան ճիւղերուն, Գիտութեանց Պսակա:որի վկայական ստացած է: 1926ին մտած է Փասթէօրեան Հաստատութիւնը, ուր մասնաւորապէս կը գրադի քիմիական գեղերու պատրաստութեամբ:

Ներկայ տարուան ընթացքին, ան Գիտութեանց Ծափելիքին առջև պաշտպանեց ջերմարոյժ գեղերու ուսումնասիրութեան նը-

774-54



ւիրուած իր մէկ թէզը եւ ստացաւ Գիտութեանց
Տօքթէօրի վկայական, ինք ըլլալով այդպէս
երկրորդ Հայր որ Քրանսական Համալսարանի
կողմէ այդ տիտղոսին արժանացած է :

Սվաճեան անդամ է մէկէ աւելի գիտական
ընկերակցութեանց, մասնաւորապէս Փրանսա-
կան բուսարանական ու քիմիարանական Միու-
թիւններուն : Արդէն իսկ հրատարակած է բազ-
մաթիւ աշխատութիւններ զանազան գիտական
հանդէսներու մէջ, ու ատոնցմէ զատ՝ մնայուն
աշխատակից է Էրեք գիտական օրկաններու,
Bulletin de la Société Chimique de France,
Chimie et Industrie, Année biologique :

Իրագեղները կը հաւատեն թէ իր այդ աշ-
խատութեանց եւ յօդուածներուն մէջ, Սվա-
ճեան յաճախ ի յայտ կը բերէ ինքնուրոյն հե-
տազօտութեանց արդիւնք եղող գիտողութիւն-
ներ եւ տեսութիւններ :

Այս աշխատութիւններէն գլխաւորներն են
հետեւեալները .

1. Քլորոֆորմի մէջ քերքաբլորիւր տը
բարպանի հետախուզման մասին .

Այս աշխատութիւնը ներկայացուած է
Ֆրանսայի Դեղարանութեան Ընկերութեան,
որուն առջարկով՝ ընդունուած է Քոտեքսի
Յանձնաժողովին կողմէ, Քոտեքսին յառաջի-
կայ տալալրութեան մէջ անցուելու համար :
Այդ աշխատութեան մէջ թելադրուած մեթոտը
ընդունուած է նաեւ զուիցերիական 1935ի Քո-
տեքսէն :

2. Էփետրիլի գունաւորեալ նոր հակազդե-
ցութիւն մը :

3. Տեղական անոզայացուցիչներու ճար-
պատեսակ մաշկերու մէջէն անցքի արագու-
թեան մասին :

Այս երկու աշխատութիւնները ներկայա-
ցուած են Դեղարանութեան Ընկերութեան :

4. Ծծումբ եւ մարմնոյ ջերմութիւն :

5. Տիէքիլալիսուֆիքիլպէնգօտիօֆսանի եւ
ֆօրիսանքիլի ներդործութիւնը քիմիական ազ-
դակներէ յառաջ եկած տենդերու վրայ :

6. Փիլիքիլիսուֆիքիլպէնգօտիօֆսանի ներ-
դործութիւնը հակազդեցութեան ժամանակին
վրայ՝ մուկերու մօտ :

Այս աշխատութիւնները ներկայացուած են
կենսարանութեան ընկերութեան :

7. Քլօրանիլ, ալիմեներու տարբերական
հակազդէ :

Այս աշխատութիւնը ներկայացուած է
Ֆրանսայի Քիմիարանական Ընկերութեան :

8. Պայմանաւորեալ ընփոխութիւն մը զեղա-
րանական ուսումնասիրութիւն :

Այս աշխատութեան մասին, որ Փրօֆե-
սէօր Լափիլքի ձեռքով ներկայացուեցաւ Գի-
տութեանց Ակադեմիային, փարիզեան լրագիր-
ները, մասնաւորապէս Թան եւ Տէպա, ու նաեւ
կրեկուար, խօսեցան եւ անկից հատուածներ
արտատուեցին :

9. Հակաջերմական զեղերու ուսումնասի-
րութեան նպատ մը, Փարիզի Գիտութեանց
Ֆաբրիլթէին ներկայացուած թէզ (զոր վերեւ
արդէն յիշեցինք) :

10. Հակացաւային եւ հակաջերմային զե-
ղեր :

Հրատարակուած Պելճիքացի Փրօֆեսէօր Հէյ-
մանսի վարած հանդէսին մէջ :

11. Պելլիս փերեմնիսի միաձայրիկ քափի-
քիլի պարագայ մը :

Այս աշխատութիւնը ներկայացուած է
Ֆրանսայի Բուսարանական Ընկերութեան :

Սվաճեան, որ, Չրաքեանի շունչին տակ
կազմուած, անոր իմաստասիրական ոգին իւ-
րացուցած է, այժմ խմբադրելու վրայ է զրա-
կան թէզ մը գիտական իմաստասիրութեան մեծ
նիւթի մը վրայ, այն է Ժամանակի եւ Միջոցի
զազափարին բնաշրջութիւնը հնագոյն ժամա-
նակներէն մինչեւ մեր օրեշք : Եւ ի մօտոյ այդ
թէզը պիտի ներկայացնէ Սորպոնի Գրա-
կան Ֆաբրիլթէին : Այդ մեծածաւալ ուսումնա-
սիրութիւնը, որմէ քանի մը հատուածներ կար-
գաց ինծի, ընտիր Փրանսերէնով մը եւ յստակ
ու վայելուչ սճով մը շարադրուած հմտալից,
բարձրախոհ եւ ինքնազրոյժ մեծարժէք աշխա-
տութիւն մըն է, որ կը պարունակէ, ոչ միայն
Ժամանակի եւ Միջոցի վրայ հին ու նոր բոլոր
իմաստասէրներու տեսութեանց մանրակրկիտ
ու մեկնարանուած ամփոփումը, այլ եւ այդ
մասին անձնական նոր տեսութիւնները զոր
ինքն իսկ յղացած ու բանաձեւած է : Այդ կա-
րեւոր ուսումնասիրութիւնը, երբ հրատարակ-
ուի, հաւանօրէն հոչակաւոր պիտի դարձնէ հե-
ղինակին անունը :



Յովսէփ Ավանեան

Այդ տաղանդաւոր, աշխատասէր, յուրջ
և համեստ երիտասարդէն, որ լսիկ մնջիկ՝
ինքնօրնութեամբ՝ հասեր է այս մեծ միջավայ-
րին մէջ գիտունի դիրք մը գրաւելու, մենք կա-
րող ենք դեռ շատ կարեւոր գործեր յուսալ,
թէ՛ քիմիարանութեան դուռ գիտական մար-
դին մէջ և թէ՛ իմաստասիրական գրականու-
թեան մէջ (ուր հայ միտքը իր ուժը դեռ քիչ
ցոյց տուած է) :

Յօդուածը, զոր Ավանեան շարադրեց իմ
խնդրանքոյս՝ Անահիտին համար և որ կ'ե-
րեւայ այս թիւին մէջ, ի յայտ կը բերէ հայե-
րէնի հմտութիւն մը, զոր իր ճկուն իմացակա-
նութիւնը և հարուստ խառնուածքը ստացած
են սքանչելի Չրաքեանէն, և զազափար մը կու
տայ այս թանկագին մտաւորականին գիտական
կուռ պատրաստութեան և իմաստասիրական
ձգտումներուն վրայ :

Ա. ՉՊԱՆԵԱՆ